Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2601

1690

~~1676.~~

Нищетне Єп. Чернігівщ.

(Переписка № 2)

Арх. 4.

XIV/ V 15
448
760

ԱՂՔԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՅՕՐԻՆԵԱՑ

Ա. Հ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1858

ԸՆԶԻՏՆԵՐ

ԱՐՇԱԿ. թագաւոր Հայոց

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ. Ընդհանուր Կաթուղիկոս Հայաստանեայց

ԱՆԴՈՎԿ. Փառանձեմի Հայրը

ՎԱՐԴԱՆ. Օթինակիր Արշակայ

ՈՂԻՄՊԻԱԴԱ. Արշակայ Ա. կինը

ՓԱՌԱՆՁԵՄ. „ Բ. „

ՀԵՂԻՆԷ. Ողիմպիադայի խնամածուն

ՊԱՇՏՕՆԱԿԱԼՔ. ՊԱՀԱՊԱՆՔ. և այլն

Տեսարանը Արշակայ պալատին մէջ։

Ողբերգութեանս թէ՛ թարգմանութեան և թէ՛ ներկայացման իրաւունքը հեղինակը իրեն կը պահէ։

Այս խնդրուի, որ հետևեալ նամակը մեր ամսագրոյն մէջ հրատարակեմք. մենք ալ Ռ տեսրակնուս մէջ ըրած մեր խոստմանը համեմատ՝ անոր հրատարակումը պարտաւորուած ենք ընելու։

Արդոյ Հեղինակ եւ Տնօրէն Մուսայք Մասեաց պատուական ամսագրոյն։

Ձեր պատուական ամսագրոյն Ռ տեսրին վերջերը նամակ մը կարդացեր էինք Օ՝միւռնիայէն խրկուած. նոյն նամակին յարգոյ հեղինակը՝ Եւրոպական Եկեղեցեաց յատկացեալ Երգեհոնը՝ Ար՝ Ասիական Եկեղեցիներուն մէջն ալ գործածելու առաջարկութիւն մը ըներ էր՝ միանգամ փափաքելով. և այս բանիս համար ազգին գիտաւորութիւնը իմանալու կ՚սպասէր։

Ձենք գիտեր, թէ ազգը մինչև հիմա ի՞նչ պատասխաներ է. և կամ թէ ի՞նչպէս պիտի տնօրինէ. ձեր խոստմանը համեմատ՝ մենք միայն այս մասին ունեցած գաղափարնիս յայտնելու պարտաւորուելով՝ ահա յետագայ յօդուածս առ ձեզ կը յուղարկեմ իբր պատասխանատուութիւն այն առաջարկութեանը. յուսալով որ՝ եթէ ձեր աղնուութիւնը բարեհաճի, զայն ձեր ազգօգուտ ամսագրոյն յառաջիկայ Տեսրին մէկ փոքր մասը զոհելով կը հրատարակէ։

1858 Յուլիս 15

Ասկէ քանի մը ամիս առաջ ազգային լրագիրներու միջոցաւ մեր Եկեղեցական Երաժշտութեանը վրայօք առաջարկութիւն մը եղեր էր Օ՝միւռնացի Յարգոյ Կոստանդեան Պաղուստ աղային ստորագրութեամբը, ինչպէս բոլոր ազգայնոց արդէն յայտնի է։ Եւ այն ատենէն՝ իվեր թէ՛ ազգիս երկու կերագոյն ժողովներէն և թէ՛ հասարակութեան կողմէն սաստիկ լռութիւն մը տեսնուելով՝ համոզուեր էինք, թէ այս խնդիրը իրօք մերժուեցաւ։

Սակայն՝ հիմա կը լսենք, որ այն առաջարկութիւնը ընող Յարգոյ անձը իր քանի մը բարեկամներովը հանդերձ կ՚աշխատի եղեր Օ՝միւռնիոյ մէջ այս բանը գլուխ հանելու՝ որ է՝ այ Եկեղեցիներուն մէջ Երգեհոնի գործածութիւնը, իբր զի Ամբիոնի կողմանէ ընդհանուր լրոնի՝ մը պեանելով (որ հաճոյանալ նշան է) եղեր. ու անով քաջալերուեր են. բարի՝ և շատ աղէկ։

Այց նախ՝ այն ազգային ընդհանուր լրոնի՝ ըսուածը մենք ինչո՞ւ չտեսանք ու չը լսեցինք. երբ կամ ո՞ւր. լսենք թէ կայ և կամ մասնաւոր տեղեր եղեր է. ի՞նչ կըսէք՝ անանկով գործը իր ուղիղ ընթացքը կը գտնէ՞, անով Երգեհոնը Եկեղեցի-

ներու մէջ դրուելով՝ ինքնիրեն իր Եւրոպական դարձուածքնե-
րովը մեր Հայկական երգերու հետ կրնայ համաձայնիլ, ու-
պէս (. . . .) կէտերուն մէջէն լսուած յայտնէրով շարունակուած
ոչ Եկեղեցական ասմունքը կ'անհետանայ . . . . ոչ երբէք . այլ
առաւել դէշ, աւելի անհամ և խառնաշփոթ ձայներ լսուելով,
ան ատեն (Ուսումնական հեռէ սրսայէ) Հրէից Սինակոկան դար-
ձած՝ այն հին աւուրց Հայկական երգերու ականջնին վարժած
բարեպաշտ ժողովուրդը խրտելով, շփոթելով կը պարտաւորին
Եկեղեցիներէն դուրս փախչելու :

Ընկերոջ՝ այս առաջարկութիւնը ընող բարեսէր անձը
կարելի է թէ՝ բոլոր ուսմանց և արհեստից կատարելութիւնը
ստացած ըլլայ, բայց կ'երևի թէ այս մասին՝ այսինքն Երաժշ-
տութեան արհեստին տեղեկութիւն մը չէ ունեցած . վասն զի
եթէ փոքր ինչ տեղեկացած ըլլար՝ այսպիսի չըլլալու և դժար
խնդրոյ մը ոչ ինքը կը համոզուեր, և ոչ ալ ընդհանուր ազգ մը
համոզելու համար՝ այս մանկտոց բերնէն առած . ի՞նչ կը-
լայ դեռ ալ Եկեղեցինիս Երգեհոն գործածենք փոխանակ ձնձղայի՝ ը-
սելու կը համարձակէր :

Ազէկ գիտնար նաև թէ՝ ի՞նչ տարբերութիւն և ո՞րչափ
անհամաձայնութիւններ կան Արևելեան և Արևմտեան եղա-
նակներու և դարձուածքներուն մէջ տեղը, (մանաւանդ Ե-
կեղեցական ասմանց) կարծեմ չէր կրնար ազգին դէմ գան-
գատելով ըսել թէ՝ ասոր պատճառը միաբան հաւանութեան պակ-
սութիւնն է :

Իրաւամբ այս "Միաբան հաւանութեան պակսութիւնը"
ազգիս ընդհանուրին օգտաւէտ՝ ուրիշ շատ բաներու վրայ կրնար
ցրցնելու և գանգատելու . ինչպէս՝ Այրարքաղաքիս մէջ կանո-
նաւոր ընդհանուր ուսումնարան մը չունենալնուս համար . որով
անկարող ընտանեաց զաւակքը հոն ամենայն կերպով ձրի հո-
գացուելով՝ օր մը իրենց պիտոյ եղած ապրուստը ճարէին .
նաև ազգերնուս դեռ թանձր տգիտութեան խաւարին մէջ տա-
պալող մասը անով օր մը յանկարծ պիտի փայլէր :

Կրնար ցրցընելու՝ մինչև ցայսօր լաւ կերպով աղջկանց
դպրոց մը չիբացուելուն համար . որմէ պիտի ելլէին՝ քաղաքավար,
բարեկիրթ, համբերող, աշխատասէր, ուսումնասէր, արհես-
տաւոր, բարեսիրտ և ազնիւ օրիորդներ . որոնք ազատ եղած
ատեննին իրենց էքաւոր ծնողացը օգտակար, ամուսնացեալ
ժամանակնին՝ իրենց ամուսնացելոյն բանիւ և գործով օգնական
պիտի ըլլային . . . :

Բայց եւ անանկ բաներու համար յայտնի կրնար «Միա-
[illegible] հաւանութեան պակսութիւնն է» ըսելու, որոնցմով ժամա-
նակին Հայոց ազգս ալ ուրիշ լուսաւորեալ ազգերուն դիմա-
ցը արեւու պէս պիտի փայլէր. բայց Հայոց Եկեղեցիներուն
մէջ Երգեհոն գործածուելու մասին ոչ երբէք։

Որովհետեւ այնպիսի ծանր պարագաներ առջեւը կայ որ՝
գործը հարկաւ անկարելիութեան մէջ պիտի ձգէ։ Ինչպէս
ազգիս մէջ գտնուած քանի մը Երաժշտութեան արհես-
տին հմուտ եւ ճիշտ տեղեկութիւն ունեցող Յարգի անձինք ալ
ազէկ գիտեն եւ կը հաստատեն թէ աս բանիս մէջ ի՞նչ եւ
որչափ անելանելի դժարութիւններ կայ. ըլլայ ալ նէ՝ ի՞նչ բա-
ներու եւ որչափ ժամանակի կարօտ է մեր Հայկական հին ա-
ւուրց եղանակները փոխելով կամ հարկաւ այլայլելով՝ Եր-
գեհոնին դարձուածքներուն համաձայնեցընելու համար։

Դարձեալ աս ալ յայտնի է որ Երգեհոնը մեր եկեղեցիներ-
ուն թէ ձեւին եւ թէ արարողութեանը յարմարցընելու համար՝
ի՞նչ կերպ եւ որպիսի փոփոխութիւններ պէտք է որ ըլլայ.
վերջապէս այս բանը իր կատարելութիւնը գտնելու համար Ե-
կեղեցիները որչափ նիւթական ծախքերէ պիտի ելլեն. թող-
ղո՛ւնք այլ եւ այլ բարոյական վնասները...։ Վերջին շա-
հը, կամ օգուտը... ան չեմ գիտեր, միայն թէ՝ ներկան եւ
ապագան կը յայտնէ։

Ուրեմն ասանկ ներկային եւ ապագային անվերջանալի
դժարութիւններ յարուցանելու խնդիրը մէկդի ձգելով՝ խնդ-
րեմ մեր Յարգոյ ազգասէր աղայէն, որ բարեհաճի ինքն եւ
ուրիշներն ալ յորդորելով՝ այսօրուան գտնուած մեր Հայան-
կան եղանակներուն (որն որ խանգարուած է) կարգի կանոնի
մը տակ մտնելուն նպատակաւ՝ ազգիս երկու գերագոյն ժո-
ղովներէն մասնաւորապէս խնդրուի. ու այնպէս օր աւուր մոռած
ոչ Եւրոպական եւ ոչ ալ Հայկական եղանակները անհե-
տանան։

Այս առթիւս նաեւ կը յիշեցընեմ մեր բարեկամին, եթէ
կը փափաքի որ ազգերնուս ընդհանուր հասարակութեան բա-
նով մը օգուտ ըլլայ, ահա մարդկային սիրալիր ընկերութեա-
նը նպաստող, և անոր մտաց լուսաւորութիւնը փայլեցընող
կանոնաւոր կերպերով թատերական խաղարկութիւնը. որմէ
բոլոր Եւրոպիոյ ամեն վիճակի տէր ժողովուրդ անոր սրտա-
շարժ և ողբալի տեսարաններէն անհամար նիւթական և բա-

բոյական հարատութիւններ քաղեցին և դեռ քաղելու վրայ են. ուստի՝ ահա խնդիր, և ահա առաջարկութիւն։

Բայց մենք, Ամբոս, ի՞նչ կ'ընենք . . . ո՜հ. պարապ յոյսերով ժամանակ կորսնցընելէն ուրիշ բաներու չենք ծառայեցներ մեր յիշողութիւնը, մեր ազգասիրութիւնը, մեր եռանդը, մեր աշխատութիւնը և մեր նիւթական ստացուածքը։ Եւ . . .

Ահա ստուգիւ և իրաւամբ "Միաբան հաւանութեան պակսութիւն։"

Քանի՞ քանի՞ անգամ այսպիսի ազգօգուտ բանի մը համար բանիւ և գործով չաշխատուեցաւ, որքան գրով և խօսքով յայտարարութիւններ չեղաւ, ասոր ճշմարիտ օգուտները ճանչցող մտաւոր անձինք որչափ ջանացին այս շահաւէտ գործը կերպով մը ազգիս մէջ ծաւալեցընելու։ Ահա արիւն քրտինք կը թափէ Մուսայք Մասնաց ամենագրին հեղինակը, լրագրերով, տետրներով կ'աղաղակէ կը պաղատի՝ ազնիւ և սրտաշարժ Ողբերգութիւններ յօրինելով, յորդորական և շարժառիթ յօդուածներ հրատարակելով, կարծես թէ իր երիտասարդութեան փայլուն ծաղիկները այս բանիս վրայ պիտի փրճացնէ. բայց ափսո՜ս . . . որ "ինքը միակ է", և փո՜ւճ աշխատանք, քանի որ այս վիճակին մէջ պիտի մնայ։

Յիմռնա՜նք նաև Օմիւռնացի Ս. անանդեցեան Յարգոյ Սարգիս աղային բաղում աշխատութեամբ 'ի լոյս ընծայած և դեռ ընծայելիք պատուական ողբերգութիւնները. և Պոլսոյ մէջ բաժանորդութեամբ թատերական ընկերութիւն մը հաստատելու համար՝ եղբօրը Յարգամեծար Յովհաննէս աղային և ուրիշ ընկերի մը հետ լրած ջանքերը. բայց 'ի զո՜ւր . . . պատճա՜ռ. ահա առաջին և վերջին պատճառ համարուած է, "Միաբան հաւանութեան պակսութիւնը"։

Ուրեմն՝ հոս մենք ալ մեր գրուածը համառօտելու համար՝ առայժմ բաւական համարիմք այս լրած քանի մը յորդորական խօսքերնիս՝ թէ Երգեհոնի խնդրոյն վրայօք, և թէ թատերդութեան մասին. որոնց համար ուրիշ անգամ մասնաւոր առիթ պիտի ունենանք խօսելու։

Մ. Գ. ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ

ՈՒՂԵՐՁ

ԱՄԻ ԲԱՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՏԷՐ

Ոչ այնչափ երկարաբանութեամբ՝ որչափ որ կատարեալ անկեղծութեամբ կը յայտնեմ սրտիս դէպ 'ի Ձերդ Ազգասիրութիւն զգացած երախտագիտութիւնը. որն որ յառաջ եկաւ Ձեր այս անգամ ինձ պէս մէկու մը ըրած օգնութեամբը։ Այո՛, Տէր իմ, գիտցի՛ք, որ զիս բաւական մխիթարեցիք ձեռնտու ըլլալով ինձ ՈՂԻՄՊԻԱԴԱ ողբերգութիւնս հրատարակելու. որուն բովանդակութիւնը դիւրաւորապէս յայտնել է ամենուն,

Նախ՝ թէ ի՞նչ է թագաւորի մը պարտականութիւնը.

Երկրորդ՝ ի՞նչ է հպարտ և անձնասէր թագաւորի մը հասուցած չարիքը.

Երրորդ՝ ցուցընել ամենուն այն հրէշը՝ որն որ պատճառ եղաւ մեր Հայրենեաց թշուառութեանը։

Ո՜ Ազգասէր Տէր իմ, ներեցէ՛ք ինծի հրապարակաւ քարոզելու սա ճշմարտութիւնը, թէ Ազգասիրութիւնն է միայն այն ճշմարիտ հարստութիւնը՝ որով ամեն մարդ կրնայ իրաւամբ պարծենալ. և չէ թէ Աշխարհային հարստութիւնը, ներկայ դարուս քաղաքավարական ձևերը և կամ ուսումնականութիւնը. չէ՛. Տէր իմ, ընչից հարստութեամբ միայն չկրնար մէկը Երկնից հաճոյ գործ մը ընել, և ո՛չ ալ լոկ ուսումնականութեամբ. բայց Ազգասիրութեամբ..... Ահա այս է գրեթէ

այն մէկ հատիկ միջոցը՝ որով կրնանք ընել այն ամեն գործերը, և խօսիլ այն ամեն ճշմարտութիւնները՝ որոնք երևելի օգուտներ կրնան ընծայել Ազգերուս։ Բայց աւա՜ղ.... որ Աշխարհս գրեթէ չինայիր այնպիսիներուն վրայ՝ որոնք ազգային սիրոյ կրակովը վառեալ՝ շարունակ կ'ուզեն աշխատիլ իրենց Ազգին համար. և սոսկալի ևս է ըսելը, որ կ'անարգուին և կը հարստահարուին ալ....

Խօսէ՛ աղատ, գործէ՛ աղատ,
Ո՛ ազգասէր դու հոգի,
Դու պաշտպանդ է Երկինք վերին.
Երիցի՛ր, վհատիր մի՛։

Այո՛, թող ամեն Ազգասէր անձինք իրենց աչուքներնին յերկինս ուղղեն, և թող վստահին, թէ օր մը պիտի վարձատրուին անշուշտ։

Թող ամեն ազգուրաց անձինք վստահին, որ օր մը պիտի հասնի իրենց վրայ Ամենակարողին բարկութեան կայծակները։ Ներէ՛ թող իմ Ազգասէր Տէրս անարժան գրութեանս պակասութիւններուն. վստահանալով՝

Որ ես պիտի մնամ իր Ազնուութեանը
միշտ երախտագէտ

Ամենախոնարհ ծառայ

ԱՐՄԵՆԱԿ Հ. ՃԻԶՄԷՃԵԱՆ

1858. Մարտ՝ 3

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա

Աբշալոյ պալատին ներսէն շէնղալարդ սրահը. երկու կողմ ծառ-ծաղիկներէ՝ որոնց ամէն մէկուն ալեաները նոսկեղ Հայկազնեան ներքաւորաց արձանները կանգնուած են. պէսպէսներն իրարը պէսնուած ոսկեայ դրան երկու կողմը երկու պահապաններ կը պէսնուին: Սրահին մէջ պէսէրը փարատոր սեղան մը. վրան ոսկեմեկ ծողերով և կողմը մեպտեկ սփռոց մը. սեղանին վրայ դրուած են արտուանական ձիրաններ, ներքը, և գաւազանը. և այլն: Սեղանին երկու դրուած է ճղուակրէայ էօթնասպիճան գահը. ամէն մէկ ասպիճանին երկու կողմերը մէկ մէկ արծաթոյ արձաններ: Սեղանին երկու կողմը ուրիշ երկու փաստաթղթ ամփոփներ դրուած են. որոնց ալ կողմերին վրայ Աբշալ նստած կը պէսնուի՝ արմուկը սեղանին կրթնցուցած և ձեռքը ճակատին վրայ:

ԱՐՇԱԿ

(Երկու վայրկեան լաւ անշարժ և անխօս կենալէն ետքը՝ ոտքի ելլելով) Ո՜հ, թագաւորները անգամ ազատ չեն դժբաղդութեանց ճիրաններէն... ի՞նչ է արդեօք թագաւորի մը ու հպատակի մը մէջ եղած տարբերութիւնը... Երկնից անկանոն վճիռներէն մէկն ալ սա է, թէ ո՛չ ոք իւր բոլոր բաղձանացը պիտի հասնի: Ո՛ անտանելի գերութիւն. յաւիտեան աւա՜ղ մարդկային սեռին՝ որ այսպիսի բռնաւորական լուծի մը տակ կը ճնշուի: Այո՛, երբոր լեռներուն խորին քարայրները թշուառ լեռնաբնակներուն հառաչանաց արձագանգը կուտան, թագաւորաց շքեղ պալատները նոյն արձագանգին ձայնը կը կրկնեն: Գիւղացւոյ մը իր հազար ու մէկ թշուառութեանցը վրայ ունեցած սրտին զգացումը ոչինչ կը սեպուի այն զգացմանը հետ բաղդատելով՝ զոր միահեծան թա-

գաւառի մը սիրտը կ'ունենայ իր մէկ փոքրիկ անհանգստութեան վրայօք։ Բարձրաստիրտ և ինծի պէս հպարտ Ազգի մը համար անանկ զարհուրելի պատիժ մըն է արքունական գահը ելլելը՝ որ ո՛չ իսկ Տարտարոսին խոր մթութեանը մէջ տիրապետող ճիւաղաց իշխանը կրնայ տալ իր ճանկերուն տակ ինկած հոգւոյ մը։ Ազար երանի պիտի ըլլար ինձ, թէ որ բնաւ ծնած չ'ըլլայի, կամ թէ ասանկ սիրտ մը չունենայի, որուն արդիւնքը անպատճառ պիտի ծաներանայ օր մը Այաստանի վրայ։ Ո՜ անիծեալ վատութիւն, ո՜ աննկարագրելի անկարողութիւն, որովհետև կարող չեմ սրտիս ապերասանութիւնը սանձելու... ա՜հ. վա՜յ քեզ Այաստան. որ այսչափ թագաւորաց և ո՛չ մէկուն նմանութիւն ունեցող թագաւոր մը կ'ելնէ հիմա քու վրադ։ Վա՜յ քեզ, Այաստան, ինչու որ այս սրտիս հպարտութիւնը վերջապէս պիտի բերէ քու վրադ այն քստմնելի թշուառութեանց տեսարանը. և նոյն սարսափելի ժամանակին մէջ Ազիին անգամ պիտի ծածկէ իւր երեսը։ Ազգակ ո՛չ մէկու մը կրնայ անսալ կամ խոնարհիլ, և իրեն այս յատկութիւնը շատ անմեղներ պիտի գահավիժէ արենալից անդունդին մէջ։ Այո՛, այս սիրտը պատճառ պիտի ըլլայ բոլոր Այաստանի տակն ու վրայ ըլլալուն, և անոր աւերակաց աղետալի տեսարանովը համայն տիեզերաց սոսկումն պատճառելու։ Այո՛, այս սիրտը պատճառ պիտի ըլլայ այն օրուան շուտ հասնելուն՝ երբ բոլոր Այաստան վայնասունով պիտի լեցուի. և այն օրուան վայնասունին գոռումը պիտի թնդացունէ լեռները 'ի հիմանց... գորովագութ մայրեր զԱզգակ անիծելով պիտի կնքեն իրենց վերջին շունչը, ձգելով իրենց մանկունքը անպաշտպան, և փչելու հոգինին իրենց մօրը դիակներուն վրայ... ո՜վ սարսափելի խորհուրդ... թող պատրաստուին Այաստանի քաղաքները քիչ ժամանակէն իրենց աւերակները ներկայացընելու ճամբորդաց, և գերեզմաններու յատակներէն ելլող ուրուականներէն աւելի սարսափ պատճառելու անոնց։ Թող պատրաստուին նաև պատմիչք՝ վատա-

Համբաւ, անօրէն, բարբարոս և ոչ — Հայ ստորադրելու զԱ՛ր-շակ և դատապարտելու զայն յաւիտենական անիծից։ Թող այն ժամանակը գտնուած Հայկազեան սեռին մնացորդը կրկին անոնց վճիռը, և թող չմոռնայ երբէք Արշակայ անունը առանց անէծք մը կարդալու... (Կը նստի և Վարդան կը մտնէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԱՐՇԱԿ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ

(Արքային անհանգստութիւնը նշմարելով) Ի՞նչ վիճակ... վեհ-հաղուստդ։

ԱՐՇԱԿ

(Ոտէն վերայ ելլելով) Վա՛րդան։

ՎԱՐԴԱՆ

Տէ՛ր իմ։

ԱՐՇԱԿ

Կը սիրեմ զքեզ, Վա՛րդան, քու հաւատարմութեանդ համար, բայց կ'ատեմ հնազանդութեանդ պատճառաւ։

ՎԱՐԴԱՆ

Ներեցէ՛ք, Տէ՛ր իմ, ձեր անսովոր խօսուածքը զիս զարմացմամբ և շուարմամբ կը լեցունէ։ Թող ներէ՛ իմ թագաւորս իր ծառային, թէ որ երբէք անհնազանդ գտնուած է. լաւ գիտէ Արշակ իւր Վարդան ծառային հաւատարմութիւնը, և անիկայ իր երկարատև ծառայութեամբը յայտնած է իր թագաւորին, թէ ոչինչ կրնայ զինքը այ՛ չափ երջանկա-

ցընել, որչափ որ ամենայն հաւատարմութեամբ և կատարեալ հնազանդութեամբ 'ի գործ դնել ի՛նչ որ իրեն կը հրամայուի։ Մինչև անգամ Վնէլայ կենաց դադարումը Ա՛ստուծոյ հնազանդութեան արդասիքն էր...

ԱՐՇԱԿ

Կեցի՛ր. ահա՛ նոյն իսկ քու կատարեալ հնազանդութիւնդ կ'ստիպէ զիս, որ զքեզ ատեմ. հնազանդութիւնը չէ՛ թէ կուրօրէն՝ այլ հրամայուած գործին նայելով պէտք է կատարուի. ապա թէ ոչ այնպիսի հնազանդութիւնը շողոքորթութիւն կը սեպուի։ Ի՞նչ է արդեօք թագաւոր մը. եթէ ոչ թագաւորաց թագաւորին մէկ ծառան։ Այո՛, թագաւոր մը ուրիշ բան չէ, բայց միայն վերին Նախախնամութեան սպասաւորներէն մէկը՝ որուն յանձնուած է խումբ մը ժողովուրդ։ Թագաւորի մը գլխաւոր պարտականութիւնն է իրեն յանձնուած ժողովրդեան երջանկութեանը համար աշխատիլ, ու չէ թէ իրեն... Հաղար վա՜յ այն ժողովուրդին՝ որ Արշակայ նման փառամոլ և անձնասէր թագաւորի մը պաշտպանութեանը յանձնուած է. և բիւր վա՜յ այն թագաւորին՝ որ իր պարտականութիւնը չիմանալով պատճառ կ'ըլլայ անթիւ անմահ էակաց թշուառութեանը... Յառաջ եկո՛ւր, Ա՛ստուած, և դադրեցո՛ւր երկիւղդ. մի՛ կասկածիր այն վստահութեանը վրայ՝ զոր ունի Արշակ քու վրադ։ Լսէ՛ ինձ, Ա՛ստուած. և իմացի՛ր, թէ Արշակ այնպիսի կերպով շղթայակապ գերի մը եղած է իւր սրտին՝ որ բնաւ չիկրնար կառավարել զինքը ըստ օրինաց Արարչին, և ըստ պահանջման մարդկային պարտականութեան։ Ահա՛ այս է քու թագաւորիդ խղճալի վիճակը, որուն մէկ խօսքը, մէկ հրամանը քարացոյց քու սիրտդ զ'Նէլ սպաննելու... մի՛ զարմանար իմ խօսուածքիս վրայ. և մի՛ կարծեր, որ ուրիշ ատեն այսպիսի պարագայի մը տակ ուրիշ ընթացք պիտի կարենամ բռնել։ Գիտցի՛ր, որ դեռ շատ ուրիշ անմեղներուն մահուան վճիռը պիտի ըլլայ իմ բերնէս և կատարես... անիծեա՛լ սիրտ... (Կէյնոյ աշխոյժ մը Վրայ)

ՎԱՐԴԱՆ

(Մէկ կողմ) Ի՞նչ խօսիմ արդեօք, զարհուրելի՜ վիճակ։ (Քաջալերելով) Վա՛ հսկաները տէ՛ր, հեռացուցէ՛ք այդպիսի ունայն մտատանջութիւնները. և իբր ամենազօրաւոր իշխան՝ կոտրեցէ՛ք այդ մտաց անհանգստութիւն պատճառող անտեղի խորհուրդներուն շղթայները։ Ասոնց փոխանակ՝ նախարարներուն հանած խռովութեանը դարման մը տանիլ մտածելու է։

ԱՐՇԱԿ

(Տեղէն ցատքելով) Զանոնք ամենքը կոտրտելէն և ջնջելէն 'ի զատ ուրիշ ի՞նչ դարման կայ... Այո՛, Վա՛րդան, գիշերուան լռութիւնը խանգարող քաղցրաձայն սոխակն անգամ վերցընելու է մէջէն։

ՎԱՐԴԱՆ

Իմ թագաւորս թող մտածէ՛ անգամ մը, թէ զանոնք լռեցընելու համար՝ մահուանէ 'ի զատ ուրիշ միջոց չիկտնուիր. (Պաղպօնակալ մը կը մտնէ ձեռքը նամակ մը, զոր Արշակայ կոպաց ու կերպաց)

ԱՐՇԱԿ

(Նամակը առնելով և քանալով) Ներսէսէն։

ՎԱՐԴԱՆ

Ներսէսէ՞ն...

ԱՐՇԱԿ

(Նամակը ձեռքելով) Այո՛, Ներսէսէն։ Ձեմ գիտեր, թէ զինքը ի՞նչ բանի տեղ դրած է. իր բռնած այս ընթացքը

կը զայրացընէ զիս։ ո՞վ է Ներսէս, որ զիս՝ յանդիմանէ. միթէ Արշակ պիտի խոնարհի՞ իրեն պէս անպիտան մէկու մը։ Ա՛ռ, Վարդան, սա նամակը, և շուտով գնա՛ ըսէ՛ Ներսէսի, որ անգամ մըն ալ ասանկ յանդգնութիւն չընէ, այլապէս ոչ՝ Արշակայ բարկութեան կայծակներովը անպատճառ պիտի շանթահար ըլլայ... (Վարդան կը վերցընէ գրեթէն) բայց կեցի՛ր, կարդա՛ անգամ մը, տեսնե՛մ, թէ ի՛նչ իրողութիւն պած է զինքը ինծի նամակ գրելու։

ՎԱՐԴԱՆ

(Կոկի կարդալ)

"Ամենավեհանձն թագաւոր Հայոց։

"Խոնարհ ծառայ Ձեր Ներսէս և շնորհիւն Աստուծոյ հո-
"վիւ Հայաստանեայց եկեղեցւոյ կը համարձակի այս նամա-
"կաւս խնդրելու Ձեր Վեհափառութենէն, որ բարեհաճիք
"աչուընիդ դարձընելու անգամ մը այն երկրին վրայ՝ զոր
"Նախախնամութիւնը Ձեր խնամոցը յանձնած է։ Տեսէ՛ք,
"Վեհափառ Տէր, անոր մօտալուտ թշուառութեան հասնիլը.
"որն որ, անկեղծաբար խօսելով, Ձեր պատճառաւը տեղի պի-
"տի ունենայ....."

ԱՐՇԱԿ

Լռէ՛, լռէ՛, գնա՛ իրեն անմիջապէս, և կրցածիդ չափ դա-
ռըն և կծու յանդիմանութիւններ թափէ՛ իր գլխուն վրայ.
գնա՛ շուտով։ (Վարդան կ'երթայ) Ա՜յ անիծեալ, ի՜նչ, միթէ
զինքը թագաւորի մը տե՞ղ դրած է. միթէ Արշակ իր ընելիքը
կրօնաւորէ՞ մը պիտի սորուի. ի՜նչ համարձակութիւն. ալ չեմ
կրնար համբերել. պէտք է որ շուտով պատժեմ զինքը։

(Կ'երթայ. պանդպանները ալ երթան)

ՑԵՄԱՐԱՆ Գ

ՈՂԻՄՊԻԱԴԱ ԵՒ ՀԵՂԻՆԷ

(Տէսարանէն ալ էողմէն գալով)

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Օրացոյցի մը խօսուածքը առիւծին մունչիւնը սրբերութիւն չունի, և միայն բաւ է իր սահմանին մէջ բոլոր գոնուողները ահուդողի մէջ ձգելու։ Թագաւորները իրենց այս մասնաւոր յատկութեամբը շատերուն յաղթած են. թագաւորի մը հրացայտ աչուքներուն միայն մէկ նայուածքը բաւական է ամբողջ բանակ մը սարսափեցընելու։ Յիրաւի՝ այս սեպհական յատկութիւնը առանց պատճառի շնորհուած չէ իրենց։ Իրաւախոհ և արդարադատ թագաւորի մը քերնէն ելած արդար վճռոյն հնազանդելու և՛ի գործ դնելու է զայն։ Ո՛ր և իցէ եղելութեան մը համար թագաւորի մը քերնէն ելած վճիռը այնպիսի ներդաշնակութիւն մը պարունակելու է՝ որն որ յայտնապէս ցուցընէ, թէ վճռատուն անդրդուելի է իր տուած վճռոյն վրայ...։ Բայց իշխողները մեծ զգուշութիւն պահելու են այս պարագայիս մէջ, և լաւ նկատելու են, որ իրենց տուած վճիռը լոկ երևակայական շարժառիթէ մը ծագած կամ իրենց փառամոլութեան արգասիքը չ'ըլլայ։ Ընկերահեմ թագաւորի մը կամ իշխանի մը տուած պնասը շատ ծանր է իր իշխանութեան տակ գտնուած երկրին վրայ. իսկ իր ժողովրդեան օրհնութիւն մըն է այն թագաւորը՝ որն որ ամեն բան արդարութեամբ և խոհեմութեամբ քննելով՝ կը խրկէ իր վճիռը երկրին մէկ ծայրէն մինչև մէկալ ծայրը։

Սխալիլը մարդուս մէկ թերի յատկութենէն յառաջ եկած է. ուստի թագաւորք ևս կրնան սխալիլ. ապա ուրեմն՝ թագաւորները իրենց վճիռը դեռ չիտուած՝ ամենանուրբ հայերցո-

ղութիւն մը նետելու են ըրած ձեռնարկութիւններնուն վրայ. անկէց վերջը թող իրենց բերանը համարձակութեամբ հնչէ վճիռը։ Ահա թագաւորի մը բերնէն ելած ասանկ վճռոյ մը ներդաշնակութիւնը սիրով կ'ընդունուի ժողովրդեան կողմանէ. թէ և ըլլայ, որ անոր ահեղագոչ ձայնը լեռները 'ի հիմանց սարսելու և զանոնք տակն ու վրայ ընելու չափ ազդեցութիւն ունենայ։

Բայց՝ աւա՜ղ, որ Ուրշակ խիստ տարբեր թագաւոր մըն է. ինքը բնաւ չի խորհիր Հայաստանի երջանկութեանը վրայ, այլ միայն իր անձնական երջանկութեանը և սրտին թելադրութեանը վրայ կը մտածէ։ Յիրաւի, մինչև որ բերնէն ելած մէկ վճիռը 'ի գործ չի դրուի, սիրտը չի հանդարտիր, բայց և այնպէս երբէք արդարութեամբ գործ չի տեսներ։ Խիստ հըպարտացած է իր թագաւորութեանը վրայ, բայց իր պաշտօնին պարտաւորութիւնները ո՛չ կը ճանչնայ և ո՛չ ալ փոյթ ունի ճանչնալու։ Կ'արծես թէ, ինքը միայն իր երջանկութեանը համար գահը ելած է . . . .

Ուա՜ղ քեզ, Հայաստան, աւա՜ղ, հազար աւա՜ղ . . . Յիրաւի, թէ և ես քու վրադ խորհելու պատճառ մը չ'ունիմ, բայց սրտիս մարդասիրական սկզբանցը դէմ ի՞նչպէս կրնամ կենալ։ Ո՜յ, եթէ երբէք Հայոց թագաւորութիւնը վտանգաւոր ըլլար իմ հայրենեացս, այն ժամանակը սիրով պիտի ուզէի, որ շարունակ ասոր նման Ուրշակներ թագաւորէին Հայաստանի վրայ. բայց ասանկ չէ բանը. արդ՝ ես ասանկ աղնիւ, քաջ, սրտոտ և վեհանձն ցեղի մը յառաջադիմութեանը փափաքելու եմ, և օր քան զօր պայծառութեանը։

ՀԵՂԻՆԷ

(Տեսարանին յետ կողմը նայելով) Տի՛րուհի։

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Հ՞ելինէ։

ՓԱՌԱՆՁԵՄ

(Դուրսէն) Այո՛, հայրիս, շուտով կ'ամբաստանեմ զայն թագաւորին. դու հանգիստ եղիր։ (Փառանձեմ դէպ ի դուռն կը մտնէ, Ողիմպիադա և Փառանձեմ ձիերուն կը քարկոծեն։)

ՏԵՍԱՐԱՆ Դ

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Մէկ կողմ) Ո՛ անիծեալ օր . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

(Մէկ կողմ) Ի՞նչ անարդութիւն . . . (Ուրիշ կը մտնէ։)

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ

(Ողիմպիադան և Փառանձեմը դէպ դեղը մտնելով)

Ո՛ երջանկութեանս, ո՛ իմ պալատիս զարդերը։ Ո՛րչափ մեծ ուրախութիւն է իմ սրտիս ձեր այսպիսի աննախանձ և սիրալիր կենցաղավարութիւնը։ Այս ընթացքով միայն կըրնաք վայելել ձեր թագաւորին անկեղծ սէրը, և ձեր կեանքը խաղաղութեամբ ու երջանկութեամբ անցունել այն բաղկացը տակ՝ որոնց հովանաւորութիւնը միշտ ապահով, քաղցր և կեն-

սատու է։ Ողիմպիադա, դու իմ պալատիս առաջին բուրաստանն ես, և ես կը հրճուիմ քեզմով. իսկ դու՝ Փառանձեմ, իմ բուրաստանիս գեղեցկութիւնն ու շքեղութիւնն աւելցընող վարդենին ես. բուրաստանս քեզմով կը վսեմանայ, և դուք ամենոր շքովը գեղեցկութիւնդ ու փափկութիւնդ կը պահես. իսկ Ամրշակ ձեր երկուքէն ալ իր սրտին զուարթութիւն կ'ըսպասէ. և այս զուարճութիւնը ընդունելու համար՝ ոչինչ կը խնայէ ձեզ։ Ամրդ՝ անտրտունջ և գոհութեամբ յանձնեցէք զձեզ այն բազկացը՝ որոնց զօրութիւնը տարածուած է այսօրուան օրս բոլոր Հայաստանի վրայ։ Հատերը զիրենք երջանիկ կը սեպեն, թէ որ անոր շուքին տակ մնալու պատեհութիւնը ունենան . . . (Անոնց անհանդարտութիւնը նշմարելով) բայց ի՞նչ կը նշանակէ ձեր այս լուռ, տխուր ու անշարժ կեցուածքը. միթէ Ամրշակայ ներկայութիւնը տհաճելի՞ է ձեզ։ Ողիմպիադա՛, երբ Ամրշակայ հետ առանձին այն քաղցրաձայն սոխակին կը նմանիս՝ որուն ձայնը անտառին խոր լռութեան մէջ թափառող և յոգնած ճամբորդին նոր քաջալերութիւն կ'ընծայէ, հիմա ինչո՞ւ լեզուդ քմացդ կպած ոչինչ կ'ուզես կամ կրնաս արտասանել. կազմութեանդ վեհանձնութիւն պարգևող զգացումդ ո՞ւր է հեռացեր արդեօք . . . ճիշդ այն օրիորդին կը նմանիս՝ որ աչուքները իր սիրելւոյն շիրմին վրայ տնկած՝ ո՛չ կրնայ վեր նայիլ, և ո՛չ ալ մխիթարութիւն մը ընդունիլ։ Խօսէ՛, Ո՛ղիմպիադա, և մի՛ վշտացրներ քու թագաւորիդ սիրտը։

ՓԱՌԱՆՁԵՄ

(Մէկ կողմ) Ձեմ կրնար դիմանալ. ի՞նչ նախատինք։

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Ա՜հ, Տէր իմ. . . . ինչո՞ւ ինծի պէս չնչին աղախնոյ մը համար ձեր սրտին հանդարտութիւնը կը կորսընցընէք . . . Ողիմպիադա ձեր գերին է, և դուք անոր իշխանը, թագաւո-

ը, հրամայեցէ՛ք իրեն, և ո՛չ թէ խնդրեցէք. Ոլիմպիադա միշտ պատրաստ է զձեզ երջանկացընելու . . . տէր իմ . . . տէր իմ . . . .

ԱՐՇԱԿ

(Ոլիմպիադայի յետոյէն քաշելով) Ո՛ղիմպիադա . . . ի՞նչ անսովոր . . . .

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Ա՜հ, տէր իմ, ներեցէք ձեր նուաստ աղախնոյն . . . .

ԱՐՇԱԿ

Հեղինէ, առաջնորդէ՛ տիրուհիդ իւր հանգստարանը: (Հեղինէ կը քաշէ Ոլիմպիադայի յետոյէն, ու կ'ուզէն երթալ:)

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Ետ կոչ) Ա՜րդեօք Ա՞ահը ասկէց սոսկալի՞ է . . . (Կ'երթան Ոլիմպիադա և Հեղինէ:)

ԱՐՇԱԿ

Ասկէց աւելի չի յուսացուիր Ոլիմպիադայի նման փափկասիրտ կնիկէ մը. մանաւանդ իր հայրենիքէն հեռու օտար երկրի մէջ: (Փառանձեմի դառնալով) Իսկ դու՝ Փառանձեմ, ո՞ իմ սրտիս նոր երջանկութիւնը, կը յուսամ որ ամենևին պատճառ մը չունիս տխրելու. բայց զարմանալին ան է որ՝ դու ալ անկէց պակաս չես երևնար մտատանջութեան մէջ: Ի՞նչ, Փառանձեմ, արդեօք Վնէլայ համար ունեցած վշտերդ նորոգուեցա՞ն. չէ՞ որ քու բերնովդ խոստովանեցար, թէ Ա՛րշակ Վնէլէն հազար անգամ առաւել հաճելի է քու սրտիդ:

ՓԱՌԱՆՁԵՄ

Ա՜հ . . . թո՛ղ գիտնայ իմ թագաւորս, որ թէ և Վնէլայ ահռելի ուրուականը դեռ կը տանջէ զիս գիշերուան հանգըս-

տութեան ժամերուս մէջ արթնցընելով զիս, բայց Փառանձեմի մոռտանջութիւնը խիստ հեռաւոր առարկայի մը հետ կապակցութիւն ունի. և այսպիսի շարժառիթ մը կամ ներքին զգացում մը հարկաւ կ'ապերջանկացընէ զիս. որ եթէ շարունակուի, տարաժամ Մահուան գիրկը պիտի յանձնէ զիս։ Ոչ՝ գիտնայ իմ տէրս, որ իւր վերհանձնութենէն 'ի զատ ուրիշ միջոց չիկայ զիս այս վիճակէս ազատելու։

ԱՐՇԱԿ

Ե՞ս, ե՞ս... թէ որ Երկինք իր ահեղ զօրութեամբը մարտնչի քեզի դէմ, անպատճառ պիտի ազատէ զքեզ Արշակ. և թէ որ Տարտարոսը իւր ամեն կատաղութեամբը զքեզ ապերջանկացընելու աշխատի, դարձեալ Արշակ իր մէկ շարժմամբը կարող է անոր միջոցները քու սահմանէդ յաւիտեան հալածելու։ Ես Արշակ եմ, Փառանձեմ. ճանչցիր զիս ուրեմն. և բաց քու սրտիդ վշտաց ակը։ Համարձակ ձգէ զԱրշակ քու սիրտդ քննելու, թէ որ իրեն կ'ապաւինիս, և թէ որ իրեն կը յանձնես ինչ որ ես, և ինչ որ ունիս։ Արդ՝ բաց սիրտդ, Փառանձեմ, և թող Արշակայ աչուքները ժամ մը առաջ նշմարեն այն անիծեալ որդը՝ որ զքեզ կը տանջէ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ոչ՝ իմ տէրս իւր սրտին զգացումը այսչափ չի բարձրացունէ. ինչու որ Արշակ իր մէկ փոքր հրամանաւը և մէկ պարզ խօսքովը կրնայ ազատել զՓառանձեմ իր վիճակէն։

Ձեր խոնարհ աղախնոյն մոռտանջութիւնը ոչ Երկնից, և ոչ ալ Տարտարոսին արգասիքն է։ Տէր իմ, այն որդը՝ որ սրտիս մէջ մտած զիս կը տանջէ, միայն ինծի բնական եղած մէկ զգացումն է։ Իմ թագաւորս իւր աղախնոյն սիրտը երջանկութեամբ լեցընելու և անոր դէմքը նոր զուարթութեամբ փայլեցընելու համար՝ բաւական է որ "կը սիրեմ զքեզ, Փառանձեմ" խօսքը արտասանէ։

ԱՐՇԱԿ

Ուրեմն տարակոյս ունիս իմ վրաս . . . ի՞նչ պատճառ քու մտքիդ մէջ այդ տարակոյսը ծնոյց, և ի՞նչ նշան կը խնդրես Արշակէն՝ որով վստահիս, թէ կը սիրէ ինքը զքեզ։ Արշակ այնչափ կը սիրէ զքեզ, զոր թերևս չես յուսար։ Փառանձեմ, Փառանձեմ, Հաւատա՛, որ քու տարակոյսդ չէ թէ միայն վշտացոյց զիս, այլ նաև զարմացոյց ալ. ի՞նչ, միթէ Արշակ իր սրտին էնսիրածը իր սահմանին մէջ պահել կ՚ուզէ։ Արշակ քու այդ զգացմանդ ծածկոցին տակ պարզապէս կը նշմարէ այն կանացի միջոցը՝ որով կրնայ ընդունիլ իգական սեռը զինքը սիրողէն այն բանը՝ զոր ուրիշ կերպով մը չեյուսար ձեռք բերել։

ՓԱՌԱՆՁԵՄ

(Մէկ կողմ) Ձէ, այս անգամ չեյայտնեմ։

ԱՐՇԱԿ

Խօսէ, Փառանձեմ, և խնդրէ Արշակէն ինչ որ կը բաղձաս ունենալ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ա՜հ, տէր իմ, սխալ կը կարդաք իմ սիրտս. չէ, ձեր աղախինը ոչ ինչ կը բաղձայ. վասն զի ձեր պալատին երջանկութիւն պարգևող բաներէն և ոչ մէկ բան կայ՝ զոր ինքը առատապէս չունենայ. միայն այն սիրոյն կը փափաքիմ՝ զոր խոնարհաբար կը յուսամ իմ թագաւորէս, թէ և անարժան ալ ըլլամ անոր։ (Վարդան կը մտնէ)

ՏԵՍԱՐԱՆ Զ

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ

Վ՚ՆՀաղունդ։

ԱՐՇԱԿ

Ի՞նչ լուր ՚Ներսէսէն։

ՎԱՐԴԱՆ

(Ոչ կողմ) Ի՞նչ խօսիմ թագաւորիս. . . (քաշէր) Ա՛ր-դէն ինքը ձեր պալատին մէջն է։ (կը մտնէ ՚Ներսէս)

ՏԵՍԱՐԱՆ Է

ԱՌՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՆԵՐՍԷՍ

ՓԱՌԱՆՁԵՄ

(Ոչ կողմ) Ո՛վ դժբաղդութեանս . . . ահա սրտիս ա-տելութեան առարկաներէն մէկն ալ. որուն դէմքը անգամ տես-նել չեմ ուզեր։ (կ՚Երթայ)

ՎԱՐԴԱՆ

Ա՛հա ինքը, տէր իմ։

ԱՐՇԱԿ

(Բռնկու�-ընելուն ՚Ներսէսի վրայ փոքրիկ) Ո՞վ ես դու ՚Ն՚ներսէս, որ կը յանդգնիս զՄ՚ՐՇԱԿ յանդիմանելու։

ՆԵՐՍԷՍ

Հանգարտէ, Ա՛րշակ, և տեղն մի՛ տար սրտիդ մէջ մտնելու այն տղայական կամ լաւ ևս է ըսեմ սատանայական հպարտութեան. որուն աղէտալի արդասիքը շատ անգամ արեան մէջ ողողացուցած է զԱշխարհ։ Ա՛րշակ, Ա՛րշակ, բաց աչուքներդ, և նախ քու վրադ դարձուր զանոնք անգամ մը. տես, թէ արքայավայել վեհանձնութիւն ունիս մի։ Ա՛րշակ, քննէ՛ քու սիրտդ և տես, թէ Հայկական իշխողի մը զգացումը կրնաս գտնել հոն . . . ։ Ա՛հ, Ա՛րշակ, դարձուր աչուքներդ անգամ մը այն երկրին վրայ՝ զոր քու Նախնիքդ անբիծ յանձնեցին քեզ. տես, թէ ի՛նչպէս աղէտից գալստեան գուժաբեր ամպերը անոր պայծառ մթնոլորտին վրայ կ՚սկսին թանձրանալ։ Սոսկա՛, Ա՛րշակ, նախատես ըլլալով՝ Հայաստանի այն ահռելի թշուառութեան տեսարանէն՝ որն որ եթէ կատարուի, անոր աւերակներուն անշունչ քարերը անգամ չի պիտի դադրին զքեզ անիծելէն. ո՜հ, այն ժամանակը քու ունայն աւաղներդ չի պիտի կարենան ողորմութեան Ա՛րարչին առջևը ելլել. կը յուսաս, որ այն ահեղ օրուան մէջ դատաւորաց դատաւորը քու դատապարտութեանդ վճիռը չի գոռացունէ։

ԱՐՇԱԿ

Դու մի՛ հոգար զիս. առանց քու յորդորանացդ ես ինքնիրենս կրնամ խորհիլ, թէ ի՛նչ պիտի ըլլայ իմ վախճանս։

ՆԵՐՍԷՍ

Ա՜յո՛, կրնաս. բայց գիտցի՛ր, որ բոլորովին անկարող ես դու սիրտդ փոխելու, և հետևաբար չես կրնար թէ՛ քու անձիդ և թէ՛ իշխանութեանդ տակ գտնուած բազմաթիւ ժողովրդեան վրայ գալիք չարիքներուն առջևը առնել։

ԱՐՇԱԿ

Բայց ի՞նչ կ'ուզես հասկըցընել բոլոր այդ խօսքերովդ։ միթէ կը կարծես, թէ այդպիսի ճառամաբանական խօսուածքովդ պիտի կարող ըլլաս Արշակայ սոսկումն պատճառելու, և զայն քու ոտիցդ առջև խոնարհեցընելու, որ աչուքները դէպ 'ի քեզ տնկած օգնութիւն խնդրէ։ Հեռացիր, Ներսէս, և մի՛ ջանար զԱրշակ քեզի հնազանդեցընելու. հեռացիր, քանի որ անոր զայրոյթը իրմէ հեռու է. բաղդաւոր սեպէ զքեզ և հեռացիր։

ՆԵՐՍԷՍ

Ա՛հ, Արշակ, ի՛մ զաւակս, դո՛ւն է Հայաստանի վրայ խըղճա՛. դիտցիր, Արշակ, որ քու այս ընթացքդ ո՛չ թէ միայն քեզի վնասակար պիտի ըլլայ. չէ՛, Արշակ, բազմութիւն անմեղ անձինք անպատճառ պիտի զոհուին թշնամեաց արիւնարբու զէնքերուն, և միայն քու պատճառաւդ։ Երբ Ամենակարողը թագաւորի մը չարութեան պատիժը տալու կը պատրաստուի, զաշխարհս կը թշնամացընէ անոր հետ։

ԱՐՇԱԿ

Եւ ի՛նչ, միթէ Արշակ զանոնք բոլորն ալ հալածելու զօրութիւն չունի՞ մի. միթէ երակներուն մէջ Հայկական արիւնը չհոսա՞ր մի։ Բայց, Ներսէս, խօսէ՛ ինծի. ո՞ր ընթացքս կարծես որ, ինծի դէմ զայրացընէ զԵրկինք։

ՆԵՐՍԷՍ

Դու ինքդ տգէտ չես յանցանքներուդ. ահա՛ Գնէլայ մահը լոկ հպարտութեանդ արդասիքն էր. բայց ասկէ աւելի քսամնելի էր անոր փառանձեմ կինը քեզի կնութեան առնելդ։

ԱՐՇԱԿ

Ի՞նչ, միթէ Արշակ ազատ չէ՞ երկու կին ունենալու։

ՆԵՐՍԷՍ

Անշուշտ չէ. երկու կի՛ն, Պրիստոնեայ թագաւոր մի՛, և ան ալ մարդասպանութեամբ. ո՜հ, ահարկու իրողութիւն... խեղճ Ողիմպիադա... արդեօք սրտէն ի՞նչ արեան գետ վազեց։ Ո՜հ, 'ի սէրն Երկնից, և 'ի պարծանս Հայկական վըսեմ դրօշակին, եկուր և ա՛լ բաւական համարէ՛ անձիդ համար ծառայելդ, հետևէ՛ քու Նախնեացդ նախանձելի օրինակին. Հայրենասիրական զգացմամբ լեցուէ՛, և խորհէ՛ թէ այս արքունական գահը ի՛նչպէս պիտի յարգես։

ԱՐՇԱԿ

Լռէ՛, լռէ՛, և մի՛ ջանար զիս բարկացընելու։

ՆԵՐՍԷՍ

Արշակ...

ԱՐՇԱԿ

Բաւ է, Ներսէս։

ՆԵՐՍԷՍ

Տես սա ճերմակ մազերս, և յորդորանքներս մի՛ անարգեր. գիտցիր, որ Հայրենեաց սէրն է որ զիս այսչափ կը խոնարհեցընէ քեզի աղաչելու։

ԱՐՇԱԿ

Ներսէս, հեռացիր, և մի՛ ստիպեր զիս վրադ անհաշտ թըշնամիի աչքով նայելու։

ՆԵՐԱԷՍ

Ինձ դէմ թշնամութիւն . . . ո՜ Երկինք . . . ի՜նչ ապերախտութիւն . . .

ԱՐՇԱԿ

Դեռ կը կենա՞ս առջևս . . . ի՜նչ յանդգնութիւն . . .

ՆԵՐՍԷՍ

Ի՜նչ սիրտ . . . ո՜ անզգայութիւն . . .

ԱՐՇԱԿ

Ներսէս, հեռացիր կ'ըսեմ։

ՆԵՐՍԷՍ

Կ'ապաւինիմ Երկնից արդարութեանը. և կը յուսամ, որ միայն դու պիտի պատժուիս։ (Կ'ելնայ)

ՀԵՂԻՆԷ

(Դուրսէն) Օգնութի՜ւն . . . . (Հեղինէ կը մտնէ և կ'ելնայ Ընչակայ ոտքէն ետև) Օգնութի՜ւն, տէր իմ, Ողիմպիադա Մահուան քրտինքներուն մէջ կը լողայ։

ԱՐՇԱԿ

Պատիժներն սկսա՞ն արդեօք. գլխէս մինչև ոտքս կը դողայ . . . (Կ'ելնայ)

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾՈՑՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԱՐՇԱԿԱՑ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ ՇՔԵՂԱԶԱՐԴ ՍԵՆԵԱԿ ՄԸ

ՓԱՌԱՆՁԵՄ ԵՒ ԱՆԴՈՎԿ

ՓԱՌԱՆՁԵՄ

(Նէրս Ֆոնելով) Վերջապէս Գնէլ Արշակայ վոխուեցաւ, և իշխան մը՝ ալքայի. բայց Փառանձեմ աւելի պատուաւոր ու երջանիկ էր, քանի որ իշխանի մը միայն սիրելի ու մէկ հատիկ ամուսինն էր. իսկ հիմա՝ թէ և ալքայի մը կին եղած է, բայց անպատուութեամբ և ապերջանկութեամբ. ինչու որ Փառանձեմ միայն Արշակայ կիներէն մէկը կրնայ կոչուիլ հիմա, բայց ոչ առաջինը: Ա՜հ, մեծ անպատուութիւն է ինծի ասիկայ, և չիպիտի կարենամ ապատ շնչել և երջանիկ կոչել զիս, մինչև Արշակայ պէս թագաւորի մը առաջին կինը չ'ըլլալով՝ Աշխարհէս չիգովաբանիմ: Ո՞նչ բան կրնայ երջանկացընել արդեօք ո՛ և իցէ կնկան մը սիրտը, եթէ ոչ տեսնել, որ իւր ամուսինը զինքը ամեն բաներէն աւելի կը սիրէ ու կը պատուէ. քանի որ ամենանուաստ աստիճանի անթիւ կանայք արժանացած են այս քաղցր նեկտարը խմելու, միթէ Փառանձեմ, միթէ Անդովկայ աղջիկը պիտի զրկուի՞ անկից. թէ որ ասանկ է, աւելի աղէկ կ'ըլլար որ կամ բնաւ ծնած չ'ըլլայի, կամ դեռ Աշխարհս չիճանչցած՝ Մահուան ճիրաններուն մատնուէի. բայց չէ, քանի որ կ'ապրիմ .... Է՜հ, ի՜նչ խօսիմ. այս դառն դժբաղդութիւնը՝ խելագարութեան պիտի մատնէ զիս .... գոնէ այս աստիճանի գեղեցկութիւն չ'ունենայի .... ո՜հ, հայր իմ ....

ԱՆԴՈՎԿ

Այո՛, Փառանձեմ. մեծ անպատուութիւն է քեզի Արշակայ առաջին կինը ընլալ, և նախատինք է նաև մեր գերդաստանին. ինչու որ Ողիմպիադա չէ թէ միայն իր գեղեցկութեամբը քեզի չի հաւասարիր, այլ նաև Այաղդի ընլալով՝ երբէք արժանաւորութիւն կամ իրաւունք չունի Արշակայ առաջին կինը կոչուելու. արդ՝ ի՛մ աղջիկս, այսպիսի նախատինքի մը առջևը առնելու է, քանի որ յարմար ժամանակն ու միջոցը մեզի համար աղէկ են։ Դեռ շատ չընէր որ Արշակ իրեն կին կոչեց զքեզ. հետևաբար զքեզ կը սիրէ. արդ՝ դու կրնաս ամեն կերպով անոր սիրտը գրաւելով՝ իրեն առաջին կինը ըլլալ, ու պատիւ Անդովկայ գերդաստանին։ Դիտնա՞ս. Փառանձեմ, որ գեղեցիկ կին մը իր լեզուովը և ընթացքովը կրնայ յաղթել շատ անգամ զինքը սիրողին սրտին զգացմանցը, և կրնայ առաջնորդել զայն իր ուզած նպակինքը կամ Դժոխքը։ Սէրը կոյր է. հետևաբար՝ խորամանկութեամբ խառն շողոքորթութիւնը ուր որ ուզէ կը տանի զայն առանց դժուարութեան. մանաւանդ՝ քեզի պէս գեղեցիկ կին մը Արշակայ նման սիրոյ գերի եղած մէկը կրնայ ուզածին պէս կառավարել։ Արդ՝ սիրտ ա՛ռ, Փառանձեմ, և առջի պատեհութեամբ Արշակայ սիրտը քեզի գրաւելու աշխատէ՛. հարկ չէ կայ քեզի սորվեցընելու, թէ ի՛նչ ընթացք բռնելու ես, ինչու որ աւելի ճարպիկ ես դու այս մասին. չեմ կարծեր թէ սեռիդ բնական ընթացքը 'ի գործ դնելու համար շատ դժուարութիւն պիտի քաշես։

ՓԱՌԱՆՁԵՄ

Այդ մասին վստահ եղի՛ր, հայր իմ, Փառանձեմ զինքը սիրցընելով՝ շատ դիւրաւ կրնայ իրեն գրաւել Արշակայ սիրտը. բայց կը վախնամ, թէ Ողիմպիադա արդէն ամենալաւ տեղը գրաւած է Արշակայ սրտին մէջ։

ԱՆԴՈՎԿ

Լ՛Հ, ատիկայ դժուար բան մը չէ. գիտցի՛ր, Փառանձեմ, որ արականք շատ դիւրութեամբ կը խաբուին վարպետորդի խգականաց, և շատ դիւրաւ կը մերժեն արդէն քիչ մը առաջ իրենց սիրոյն առարկայ եղողը. մանաւանդ՝ երբոր երկրորդը աւելի վեհանձնութիւն, աւելի գեղեցկութիւն և քաղցր խօսուածք ունենայ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ո՞շմարիտ է քու խօսքդ, հայր իմ, որ այդպիսի ընթացքները կրնան մէկը իւր նպատակին հասցընել, բայց քիչ անգամ ալ չի պատահիր, որ փուճը կ՚ելլեն։

ԱՆԴՈՎԿ

Դու. աննկարելի գեղեցկութեամբ զարդարուած շուշանի մը կը նմանիս. և այդպիսի գեղեցկութեան մը յափշտակիչ ըլլալը ոչ կրնայ ուրանալ. երբ որ գեղեցկութիւնը վեհանձնութեան բէհէղովը կը զարդարուի՝ ան ատենը ալ անյաջող չի կրնար ըլլալ։ Դու անղուգական գեղեցկութիւնդ և վեհանձնութիւնդ՝ զորս բնութիւնը քեզ մասնաւոր շնորհք մը ըրած է, դիւրաւ պիտի կարենան յափշտակել զՄղիմպիադա Ը.ըշակայ սրտէն, եթէ իրօք հոն տեղ մը գտած է ինք. և զքեզ պիտի դնեն հոն. արդ՝ քաջալերուէ՛, և քու բոլոր ճիգդ թափէ՛ միայն այս նպատակին համար. անշուշտ պիտի հասնիս այն աստիճանին՝ զոր գերդաստանդ քեզմէ կ՚սպասէ։ Հուսացուր մտքէդ անյաջողութեան խորհուրդը. և թող տիրէ քու սրտիդ մէջ այն համարձակադէմ արիութեան Ը.ստուածուհին՝ որուն ունեցած իշխանութիւնը մեծ է Ը.շխարհիս վրայ. շատ Ը.ըշակներ շղթայակապ գերիի նման խոնարհութեամբ աս Ը.ստուածուհւոյն առջևը ինկած են։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ընդդու. և համոզիչ են քու խօսքերդ, ո՜ հայր իմ, և զիս դրեթէ արդէն յաջողութեան կենսատու մթնոլորտը կը տանին. սիրտս ասոր համոզուած ըլլալով՝ այն քաղցր բայց անհանդիստ վիճակին մէջ կ'ինայ՝ որն որ կը պատահի այն թըշուառ արարածներուն՝ որոնք մերձակայ երջանկութեան յուսով մրափած ժամանակնին կ'երազեն։ Ը՞հ, կարծես հոգիս կը թռչի և կ'ստիպէ զիս անմիջապէս ազատ ձգելու զինքը, որ 'ի գործ դնէ այն ամեն միջոցները՝ որոնք զվառանձեմ պիտի բարձրացընեն 'ի պարծանս իւր անուանը և Ընդոմկայ գերդասանին։ Ընդ՝ վստահէ՛, հայր իմ, և ապահով եղի՛ր։

ԱՆԴՈՒՎԿ

Քու զգացմանդ արթննալով՝ ունեցած աճապարանքդ անպատմելի ուրախութեամբ կը լեցընէ զիս. արիացիր ուրեմն և սկսէ գործողութեան. առջի ընելիքդ գ.քեզ վշտացեալ ցուցուներդ է, և այն աստիճան վշտացեալ՝ որ Ընշակ գրգռուի քու վշտիդ պատճառը իմանալու. ահա՛ այն ժամանակը թող հնչէ քու լեզուդ այն բառերը՝ որոնք պիտի ազդեն Ընշակայ սրտին. դէմքդ՝ կապուտակ ալեաց մէջ ծփացող խնձորի նման, մէյ մը թող դուրս ցայտեցընէ իր կարմիր գոյնը, և մէյ մը թող ծածկուի այն ալիքներուն ծոցին մէջ. աչուքներդ թող երբեմն մեղմութեան քաղցր ճառագայթներ արձակեն, և երբեմն կըրակ ցատկեցընեն դուրս. քու շարժումդ այն զինուորին շարժմանը թող նմանի՝ որն որ անիրաւ անյաջողութեան ժանիքներուն մատնուած, նախանձը բորբոքած, վերհանձն ամօթ մը զինքը պաշարած և վիրը ծռած՝ անխօս և արձանացեալ կը կանգնի իր եղբարց դիակներուն մէջ. և իրեն սրտին՝ հօրիզօնին երեկոյեան սքանչելի տեսարանը անգամ չիկրնար աղդել։ Ա՛յլ երջապէս՝ ջանք ըրէ՛ հաւատացընել Ընշակայ, թէ քու այս բոլոր ընթացքդ հայրենասիրական զգացմանդ արդասիքն է. որն որ անշուշտ պիտի ազդէ իրեն։

ՓԱՌԱՆՁԵՄ

Յաջողութիւն, հայր իմ, յաջողութիւն . . . Արշակ կամ Հայրենասիրութիւնը պիտի մերժէ, կամ ընդունելով իմ առաջարկութիւնս՝ պիտի ըլլէ զԱղիմպիադա իր անիրաւ գահէն, և զիս պիտի բարձրացընէ հոն. Ես ասիկայ յստակ կը կարդամ: Ո՞ւրեմն Հայոց արքունական գահին այսպիսի նախատինք մը ըլլալը կ՚ուզէ՞ Արշակ . . . ո՞վ է եկողը . . .

ԱՆԴՈՎԿ

Թագաւորը կուգայ. Ճարպիկ եղի՛ր: (Կ՚ելնեայ)

ՓԱՌԱՆՁԵՄ

Այո՛, ինքն է: (Արշակ կը մտնէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԱՐՇԱԿ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

ՓԱՌԱՆՁԵՄ

(Ինքը զԱրշակ չնկատած) Ա՜հ, ի՜նչ ապերջանիկ երկիր մը է Հայաստան. և անոր այս թշուառութիւնը վրայ ո՞ր հայրենասէր չիվշտանար:

ԱՐՇԱԿ

Սիրելի Փառանձեմ:

ՓԱՌԱՆՁԵՄ

Ա՜հ, իմ թագաւոր:

(Մէկ հոլմ պառնալով ինքը ընէ արտասուքը կը սրբէ)

ԱՐՇԱԿ

Փառանձեմ, սիրելիդ իմ Փառանձեմ. ի՞նչ իրողութիւն վշտացուցած է զքեզ. միթէ իմ առ քեզ ունեցած սէրս դեռ չհաճանչնալով կը յիշես այն Գնէլը՝ որն որ իւր սէրը կը կոչէր զքեզ. միթէ Գնէլ թագաւորի մը ունեցած վեհանձն սէրը կրնա՞ր իւր սրտին մէջ կրել. միթէ այն զքեզ երջանիկ ընելու համար Արշակայ չափ կարողութիւն և կամք ունէ՞ր. է՛հ, ես չեմ ուզեր զքեզ այսպիսի տխրութեանց մատնուած տեսնել. դարձի՛ր առ իս և կարդա՛ ճակտիս վրայ այն սէրը՝ որ քեզի համար սրտիս կենդրոնէն կը բղխի. դարձի՛ր առ իս և յայտնէ՛ այն գաղտնիքը՝ որ քու սրտիդ մէջ ծածկուած է. Փառանձեմ, վստահէ՛ ինծի, և հեռացո՛ւր քու սրտէդ ամեն անվստահութիւն Արշակայ վրայ. և թող Արշակ դարձեալ տեսնէ՛ քու աննման դէմքդ ուրախութեան լուսովը պայծառացած, ու երջանկանայ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ա՛հ, տէր իմ, սրտիս դառն վշտերը հալիւ կը ձգեն զիս խօսելու և հոն ծածկուած գաղտնիքը յայտնելու ձեր վեհափառութեանը. գաղտնիքը ծանրակշիռ է. բայց աւելի ծանրակշիռ է այն ծածկոցը՝ որ կ'արգիլէ զայն յայտնուելէն. պատճառը զիս կ'ողբացընէ. բայց այն ձեռքը՝ որն որ զայն կը գոցէ, չիձգեր զիս ազատ՝ որ ներսէս դուրս տամ . . . ա՛հ, տէր իմ . . .

(Ցրտաբար դէպի կը դուրս կը ելնէ)

ԱՐՇԱԿ

Ու միթէ Արշակ կարող չէ՞ ազատելու զքեզ այդ վիճակէն՝ որուն տակը կը ճմլուիս. Փառանձեմ, ճանչցիր զայն՝ որ կը սիրէ զքեզ. և սրտիդ բոլոր վստահութեամբը յայտնէ՛ իրեն ինչ որ կ'ապերջանկացընէ զքեզ. Արշակն է՝ որ քեզ կը խօսի.

այն Ամրշակը՝ որուն կարողութիւնը Աշխարհ կը ճանչնայ և կը գողայ անկից. արդ խօսէ համարձակ, և ապաւինէ ինծի։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ամ՛հ, տէր իմ, գիտցէք որ միայն Հայրենեաց փառքը և ձեր իմ վրայ ունեցած սէրն է՝ որ համարձակութիւն կուտայ ինծի խօսելու՝ ձեր վեհափառութեան սիրտը հանդարտեցընելու համար. և ոչ թէ փոքր ինչ յոյս մը ունենալով, թէ պիտի կատարուի սրտիս այն սուրբ իղձը՝ որն որ՝ եթէ ուզուի, կանացի և ամօթալի հպարտութեան և նախանձութեան արդասիք մըն ալ կրնայ սեպուիլ. բայց Երկինք անգամ գիտէ, որ առ ձեզ և առ Հայրենիս ունեցած սէրս կ՚ստիպէ զիս յայտնելու այն պատճառը՝ որն որ հոգւոյս դրեթէ ամեն կողմը շրջապատած, սիրտս տակն ու վրայ ըրած՝ իմացականութիւնս անգամ խանգարելու կը պատրաստուի։

ԱՐՇԱԿ

Ամրշակ կարող և պատրաստ է երջանկացընելու ղքեզ. խօսէ՛, սիրելիդ իմ Փառանձեմ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ձեր վրայ ունեցած վստահութիւնս կը խրախուսէ զիս յայտնելու, թէ Ողիմպիադա և միայն Ողիմպիադա է այն պատճառը...

ԱՐՇԱԿ

Ողիմպիադա՞...

ՓԱՌԱՆՁԵՄ

Ողիմպիադա. այո՛, տէր իմ, այն Ողիմպիադան՝ որ ղքեզ ոչ կը սիրէ, և ոչ ալ կրնայ սիրել։

ԱՐՇԱԿ

Կը շողքորթէք զիս ուրեմն։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ուրիշ բան չեկրնար ընել, և չուզեր ալ։

ԱՐՇԱԿ

Կ'ատէ զիս ուրեմն։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ես չեմ կասկածիր, վասն զի . . .

ԱՐՇԱԿ

Ընպացքդ տուր, և վստահէ, որ անմիջապէս կը պատժեմ զինքը։

ՓԱՌԱՆՁԵՄ

(Կեղծելով) Ո՜հ, տէր իմ, 'ի սէրն Աստուծոյ մի՛ բարկանաք իրեն դէմ։

ԱՐՇԱԿ

Յառաջ տար քու խօսքդ, և ցուցուր ինծի, թէ Ոգիմպիադա զիս կ'ատէ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Բայց խոստացիք, տէր իմ, որ զինքը չէք պատժեր։

ԱՐՇԱԿ

Յառաջ տար, Փառանձեմ, և ճնացածը ինծի ձգէ . . . մի-թէ Արշակ պիտի խաբուի անպիտան կնիկէ մը։

ՓԱՌԱՆՁԵՄ

Այո՛, տէր իմ. մանաւանդ Յոյն կնիկէ մը. որն որ անարժանաբար Հայոց թագաւորի մը առաջին և սիրելի կինը ըլլալով՝ նախատինք եղած է Հայաստանի շքեղ և պանծալի գահին . . . բայց գալոնիքը, տէր իմ, զարհուրելի է. և ես պարտիմ յայտնել զայն ձերդ վեհափառութեան. վասն զի ձեզի պէս անզուգական թագաւորի մը կեանքը ապահով չէ, քանի որ ինքը տգէտ է այն իժին վրայօք՝ զորն որ իւր գրկին մէջ կը պահէ։ Ողիմպիադա Յոյն է, տէր իմ, և հետևաբար չիկրնար սիրել Հայ մը. մանաւանդ որ կ՚ատէ . . . ա՜հ, ի՜նչպէս յառաջ տանիմ խօսքս, չէ՛, չիհամարձակիր բերանս հնչել այն բառերը՝ զորոնք Ողիմպիադա կարծես վրիժապահ սրտով մը անզգայաբար կ՚արտասանէ, և ձեր վեհափառութիւնը վատ Հայ և անարժան թագաւոր կոչելու կը յանդգնի։

ԱՐՇԱԿ

Ողիմպիադա զիս վատ Հայ կը կոչէ . . . վատ Հայ . . . անարժա՛ն թագաւոր . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

(Ցոնկան վրայ) Ո՛հ, տէր իմ, մի զայրանաք իրեն դէմ. իր մանկութեան ժամանակ ստացած գաղափարն է՝ որ զինքը այսպիսի կերպով կ՚ստիպէ անարդելու այն ցեղը՝ որուն անունը անգամ կը տարտաղնչէ զթագաւորութիւնները։ Կը խնդրեմ, տէր իմ, մի վճռէք կայծակնահար դատապարտութեան մատնելու զինքը. արիասիրտ թագաւոր մը վեհանձն կ՚ըլլայ. և վեհանձն սիրտը ներողամտութեան ոգի կը կրէ. արդ՝ տէր իմ . . .

ԱՐՇԱԿ

Ելմ՛ը, փառանձեմ, այսպիսի յանցանքի մը չեմ կրնար ներում շնորհել. եթէ իրօք այսպէս յանդգնաբար խօսած է ին-

ծի համար՝ անմիջապէս պիտի խրկեմ զինքը հոն՝ ուր ոչ Աբշակ պիտի գտնուի, և ոչ ալ Աբշակայ ապրէն մէկը։

ՓԱՌԱՆՁԵՄ

(Ոտէն ելլելով) Այո՛, տէր իմ, կրնաք անմիջապէս հեռացընել զինքը ձեր քովէն. և իւր փառքէն զրկուելը անշուշտ ծանր պատիժ մը պիտի ըլլայ իրեն. և անպատիւ ու անարգուած՝ երես անգամ չէպիտի ունենայ իւր հայրենիքը դառնալու, որուն համար գրեթէ ամեն ժամ կը հառաչէ. և մեր երկիրը՝ երկիր թշուառութեան, երկիր անարդ Հայոց կոչելով՝ "ա՜հ, իմ հայրենիքս ե՞րբ պիտի տեսնեմ" կը գոչէ։

ԱՐՇԱԿ

Հայց, փառանձեմ, դու ինքդ լաւ ես իր այսպէս խօսիլը, և կրնաս ապացուցանել։

ՓԱՌԱՆՁԵՄ

Այո՛, տէր իմ, դեռ այս առաւօտ նոյն խօսքերը կրկնեց պարտէզին մեծ ճեմելիքին մէջ. ուր շատ անգամ կ'ներթայ։

ԱՐՇԱԿ

(Ինքզինքը խորհելով) Բարի. ուրեմն պատրաստուէ՛ որ այս բանիս վկայութիւն տաս. և վստահ եղէ՛ր, որ՝ եթէ Ողիմպիադա յանցաւոր գտնուի, անմիջապէս իւր տեղը դու. պիտի անցնիս. և Ողիմպիադա . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

Կ'աղաչեմ, տէր իմ, անգթաբար մի վարուիք հետը. թող վերհանձնութեան ոգին՝ որն որ Հայոց թագաւորներուն սրտէն

չինպակիր, այս պարագային մէջ ալ տեսնուելով թող հիացընէ բոլոր աշխարհը։

ԱՐՇԱԿ

Բայց երբոր թագաւորի մը վեհանձնութիւնը արդարութեամբ զինեալ չէ, անիրաւութեան կը փոխուի. գթութիւնը և ներողամտութիւնը շատ անգամ տկար սրտի մը արդիւնքն են. և մանաւանդ ասանկ յանցանքի մը համար, որն որ ընդհանուր ՀայաստանիՆախատինք է . . . երկիր թշուառութեան կը կոչէ՛ մեր երկիրը . . . բարի. ուրեմն թող ինքն ալ փորձառու ըլլայ այնպիսի թշուառութեան մը՝ զորն որ բնաւ չէ տեսած կամ չէ խորհած։ Ընդ՝ Փառանձեմ, դու պատրաստուէ՛ անոր վրայ ըրած ամբաստանութիւնդ հաստատելու, և բնաւ մի՛ խորհիր անկից վերջը ըլլալիքին վրայ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ես իմ կողմանէս այդ պարտականութիւնս կատարելու միշտ պատրաստ եմ. բայց սիրտս սաստիկ պիտի վշտանայ, թէ որ զինքը տեսնեմ սոսկալի դատապարտութեան մը ներս եղած. զորն որ եթէ կամի ձեր վեհանձնութիւնը կրնայ մեղմացընել։

ԱՐՇԱԿ

(Տարակուսելով Փառանձեմի ըրած ամբաստանութեանը վրայ)

Դու պարտականութիւնդ կատարելէն 'ի զատ ուրիշ բան մի՛ խորհիր, և մնացածը ինծի ձգէ՛. միթէ Ընշակ իր ընելիքը կնիկէ՞ մը պիտի սորուի. չէ՛, չէ՛. թէ արդարութիւնը և թէ ողորմածութիւնը կարող է Ընշակ որոշելու և 'ի գործ դնելու։ (Կ'ելնայ)

ՓԱՌԱՆՁԵՄ

(Քանի մը վայրկեան խորհելէն վերջը) Ո՜հ, արդեօք պիտի յաջողի՞մ, և փարիզեցիս հասնելով պիտի երջանկանա՞մ. միթէ պիտի տեսնե՞մ զԱղիմպիադա պատժուած և զիս յարգուած և բարձրացած այն ցանկալի աստիճանին՝ ուր միայն սիրտս կրնայ

երջանկանալ։ Ա՜հ, ե՞րբ Փառանձեմ պիտի դովաբանի Աշխարհէս իբրև առաջին Թագուհի Հայոց. ե՞րբ պիտի տեսնեմ զիս շրջապատեալ բարձրաստիճան պաշտօնականներէ, որոնք միայն պիտի խորհին թէ ինչ կերպով կրնան երջանկացընել զիս։ Ա՜հ, Փառանձեմ, Փառանձեմ, երանի՜ քեզ, երբ հանիս դու քու փափաքիդ. իսկ թէ որ քու ջանքդ անօգուտ ելլէ, հազար եղի՜ւկ այն ժամանակը. աւելի աղէկ կ՚ըլլար որ կայծակնահար վերջանար քու կեանքդ . . . բայց ես ինչո՞ւ կը տարակուսիմ. միթէ կարելի՞ է, որ ինծի պէս լեզուանի, գեղեցիկ և վեհանձն կին մը չհասնի իւր փափաքած յաջողութեանը. մանաւանդ որ բաղդը ինծի համար աղէկ է. ահա ասկէց քիչ մը առաջ լոկ Գնէլի մը կիներ էի, իսկ հիմա արքայի մը։ Այո՛, պէտք է որ մոքէս բոլորովին ջնջեմ անյաջողութեան խորհուրդը, և արիութեամբ յառաջ երթամ բռնած ընթացքիս մէջ, աներկիւղ և անկասկած . . . Հայրս կուգայ . . .

(Անդովէ հետ դարձեալ)

ՏԵՍԱՐԱՆ Գ

ՓԱՌԱՆՁԵՄ ԵՒ ԱՆԴՈՎԿ

ԱՆԴՈՎԿ

Փառանձեմ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Հայր իմ, ինչո՞ւ անսովոր . . .

ԱՆԴՈՎԿ

Ա՜սն զի Արշակայ դիմաց գծագրութիւնը ինծի շատ հաճելի չ՚երևցաւ, երբոր մեծ սրահէն կ՚անցնէր, կարծեմ թէ տարակոյս մը տիրած էր իր սրտին մէջ. որն որ ճակտին վրայ ալ կը կարդացուէր։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ընհոգ եղիր դու, հայր իմ, և աղջկանդ վստահէ. ներկայ գտնուելու էիր, երբոր կըխօսէի թագաւորին հետ։ Ողիմպիադայի վրայ երբէք ատելութիւն չիցուցուցի. մանաւանդ որ. երբ տեսայ զԸրշակ զայրացած, ծնկան վրայ աղաչեցի որ չիդատապարտէ զՈլիմպիադա ծանր պատժոյ մը, այլ միայն արքունիքէն աքսորելով զայն՝ բաւականանայ։ Իսկ Ընշակ իմ աղաչանաց բնաւ ականջ կախել չ'ուզեց, այլ հրամայեց ինծի, որ ըրած ամբաստանութեանս ապացոյց տալու պատրաստուիմ։

ԱՆԴՈՎԿ

Ամբաստանութիւն. . . . ի՞նչ ըսել կ'ուզես։

ՓԱՌԱՆՁԵՄ

Կեցիր, մի՛ այլայլիր, հայր. իմ ըրած ամբաստանութիւնս այնպիսի վարպետութեամբ յօրինուած ու հիւսուած էր՝ որ թագաւորը ո՛չ իմ ըսածներուս ճշմարտութեանը վրայ կրնար տարակուսիլ, և ո՛չ ալ կարող էր տեսնելու սրտիս խորշերուն մէջ ծածկուած դաղտնիքը և նպատակը։

ԱՆԴՈՎԿ

Փառանձեմ, թագաւորները երբոր հետամուտ կ'ըլլան իրենց պաշտօնին ամեն մէկ պարտականութեանցը, շատ քիչ անգամ կարելի է որ խաբուին. բայց երանի՜ թէ Ընշակ զքեզ անկեղծ ճանչնար։

ՓԱՌԱՆՁԵՄ

Հայր իմ, դու վստահ եղիր քու Փառանձեմիդ վրայ. . . մտքիս մէջ ուրիշ խորհուրդ մը կը ծագի։

ԱՆԴՈՎԿ

Ի՞նչ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ծունաւորիլ զՈլիմպիադա։

ԱՆԴՈՎԿ

Թունաւորե՞լ . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

Այո՛, այո՛. ամենէն ապահով միջոցը ասիկա է։

ԱՆԴՈՎԿ

Բայց ի՞նչ կերպով։

ՓԱՌԱՆՁԵՄ

Երթանք ասկից, և ամեն բան կարգի դնենք։

(Կ'ելլեն)

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՑՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ՓԱՌԱՆՁԵՄԻ ՇՔԵՂԱՋԱՐԴ ՍԵՆԵԱԿԸ

ՓԱՌԱՆՁԵՄ

Այո՛, ալ շատ քիչ մնաց, որ ես պիտի հասնիմ իմ բաղձանացս. թակարդը այնպիսի վարպետութեամբ մը լարուած է՝ որ ո՛չ իսկ արծուին սրատես աչուքները կրնան դիտել զայն։ Ո՞վ կը կասկածի երբէք, որ քահանայ մը իր ժողովրդեանը մահ ներկայացընէ. ո՜հ, ի՜նչ բարեբաղդ մէկն եմ ես. կարծես ամեն միջոց ինծի կը հնազանդի. բաւական է որ կամք ընեմ. ահա Երկինք, Երկիր, Դժոխք և անոնց մէջ ամէն բնակիչները զիս իմ ըղձիս հասցընելու կ'աճապարեն։ Կարծես թէ, Երկնից էակները և Տարտարոսին ճիւաղները օգնական են գեղեցիկ կնկան մը. ի՜նչ մեծ պարգև մըն է կնկան մը գեղեցկութիւնը իրեն. գեղեցի՛կ ես, մի՛ վախնար.

զարդարէ գեղեցկութիւնդ արիութեան դօտիով. աւելցուր ասոնց վրայ նաև վեհ շարժուածք և ազդու խօսուածք. ահա մէկէն բոլոր Տիեզերք կը խոնարհին քու առջևդ. հրամայէ, և անմիջապէս քու կամքդ կատարուած պիտի տեսնես. ահա այն քահանայն՝ որ սրբակրօն հռչակուած է, կը միաբանի այսօր ինծի հետ. զ Ողիմպիադա Ա՛ահուան մատնելու։ Այո՛, պիտի մատնայ քահանայն Ողիմպիադայի կենաց հացով, և վերցընէ պիտի անոր կեանքը. որն որ զիս քիչ անհանգիստ չ'ըներ։ Արշակ բոլորովին յաւիշտակեալ՝ դրեթէ մոռցաւ իմ ըրած ամբաստանութիւնս. Արշակ՝ որ իւր անձին երջանկութենէն 'ի զատ ուրիշ բան չի խորհիր, կուրացեալ է բոլորովին նկատելու այն տեսարանը՝ որն որ շուտով պիտի կատարուի. կը հաւատամ, որ Ողիմպիադայի անշարժ դիակը անգամ չի պիտի կրնայ կասկած մը տալ Արշակայ . . .

Արիացիր, Փոռանձեմ, ամեն գործ սրտոտութեամբ գըլուխ կ'ելլէ. աներկբայ կը հաւատամ, որ քիչ օրէն պիտի բարձրանամ ես հոն՝ ուր իմ սիրտս կրնայ խմել այն քաղցր նեկտարը՝ զոր բաւական ժամանակէ 'ի վեր օտարազգի կին մը կը վայելէ։

Ամէն տեսնէ բոլոր Աշխարհ, թէ բաւական է որ կին մը գեղեցիկ ըլլայ. ա՛լ չի կրնար անյաջողութեան հանդիպիլ. կոյր բաղդը անգամ անոր յարատև ընկերն է, և բաղդին կառաւարութիւնը դրեթէ կնկան ձեռքն է. ապա ուրեմն անյաջողութեան տարակոյսը թող փարատի իգական սեռին սրտէն. թող ճակատաբաց ձեռք զարնե՛ն գլուխ հանելու ի՞նչ բան որ կը յուսան, թէ կրնայ զիրենք երջանկացընել. և ասկէց 'ի զատ ուրիշ ի՞նչ բան կրնայ կնկան մը սիրտը երջանկութեամբ լեցընել երբոր տեսնէ հպարտ մարդ մը իր ոտքին տակը ինկած. որ պատրաստ է միշտ կատարելու ի՞նչ որ իրեն սիրոյն առարկան կը ցանկայ։ Ա՛հա այս է այն մէկ հատիկ շնորհը՝ որով կանայք զիրենք բաղդաւոր կրնան կոչել ազատաբար . . . (Ընդհանէ կը մնանէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՓԱՌԱՆՁԵՄ ԵՒ ԱՆԴՈՎԿ

ԱՆԴՈՎԿ

Փառանձեմ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Ահա ճակատագրաց և պարզերևս, հանդիստ սրտով կ՚իմացընեմ քեզ, որ մեր նպատակին շուտով պիտի հասնինք։ Քահանայն՝ զոր այս անգամ մեր գործիքը ըրած ենք, իւր բոլոր խորամանկութիւնը՝ի գործ պիտի դնէ անթերի, և քիչ ատենէն պիտի խրկէ զՈղիմպիադա հոն՝ ուր գնացողները ալ ետ չեն դառնար։ Ահա տես հիմա, հայր իմ, թէ Փառանձեմ ոլքան բաղդաւոր է. երջանիկ կոչէ՛ դու զքեզ։

ԱՆԴՈՎԿ

Քու ճարպիկութեանդ վրայ ունեցած համարումն ալ ստորադրութեան տակ չ՚ինայեր. արդ՝ թող նախանձին հայրերը իմ վրաս։ Բայց՝ Փառանձեմ, լաւ հսկողութիւն ըրէ՝ որ ըրած դաւադրութիւնդ չ՚ելյայտնուի. գիտցի՛ր որ իգական սեռին մէկ պակասութիւնն ալ իր անխոհեմութիւնն է. շատ անգամ կանայք իրենց լարած որոգայթը կը յայտնեն անոր՝ որուն համար որ պատրաստած են։ Արդ՝ Փառանձեմ, աչուընիդ այս մասին թող սրահայեաց ըլլան, մինչև որ գործը կատարուի։

ՓԱՌԱՆՁԵՄ

Զարմանք կը պատճառես ինծի, հայր իմ. ի՞նչպէս կը յուսաս որ Փառանձեմ այնչափ յիմար ըլլայ՝ որ իր ընելիքը թերի՝ի գործ դնէ. գիտցի՛ր, որ աղջկանդ աչուընները այնպիսի ներքաքնին են՝ որ ո՛չ իսկ գիշերուան խոր մթութիւնը կրնայ արգիլել զինքը երկնից սահմաններէն վեր թռչող թռչունը տեսնելէն։ Գիտցի՛ր նաև, որ ես գիւրաւ կը կարդամ

ռ՝ և իցէ մէկու մը ճակտին վրայ ինչ որ սրտէն կ՚անցնի։ Ուրդ՝ հեռացուր մտքէդ այդ ունայն գաղափարը, և տեղն մի՛ տար, որ անգամ մ՚ալ տիրէ մտքիդ կասկածը։ Ամենայն կերպով վստահէ՛ քու աղջկանդ՝ որուն քաղցր հայեցուածը բաւական է Ուրշակայ պէս շատերը խոնարհեցընելու։

ԱՆԴՈՎԿ

Ապա ուրեմն՝ թող ես անթերի երջանիկ կոչեմ զիս, որ քեզ նման անզուգական աղջիկ մը ունիմ . . . բայց Փառանձեմ, պատմէ՛ ինծի, ի՞նչպէս եղաւ որ կարող եղար համոզելու զքահանայն, որ այսպիսի սոսկալի գործի մը ձեռնամուխ ըլլայ. քնաւ ընդդիմութիւն չ՚ըրաւ։

ՓԱՌԱՆՁԵՄ

Դեռ կը տարակուսիս, հայր իմ, Փառանձեմիդ վարպետութեանը վրայ. միթէ ընդհանուր Հայաստանի վրայ տիրապետող Ուրշակայ նման նրբաքննին և սրատես մէկու մը զգացումները իր ձեռաց մէջ ամփոփող մէկը դժուարութիւն պիտի քաշէ խեղճ, պարզամիտ և մանաւանդ շահասէր քահանայ մը իրեն հնազանդեցընելու. յիրաւի՝ թէ և քահանայն առջի բերան չ՚ուզեց անսալ ինծի, բայց գիտցիր որ, Փառանձեմիդ այնպիսի կերպով և շարժմամբ խօսեցաւ անոր հետ՝ որ շուարեալ բառ մը անգամ արտասանելու կարող չ՚էր. զՈՂԻՄՊԻԱԴԱ այնպիսի հրէշի մը նմանցուցի. որ ինքն ալ լաւ սեպեց անանկին կեանքը վերջանալը. Ուրշակայ իր կառավարութեանը վրայ ունեցած անհոգութիւնը խիստ շատ ներգործեցին անոր սրտին՝ անանկ որ՝ վերջապէս համոզուեցաւ, որ գէթ Հայրենասէր Հայազգի առաջին թագուհի մը պէտք է արքունեաց մէջ, և ան ալ աննախանձ։ Ահա. Հայր իմ՝, այս տեսակ վարպետութիւններով կրցայ համոզել զինքը, որ թունաւորէ զՈՂԻՄՊԻԱԴԱ երբոր կենաց Հացը անոր ներկայացունէ. ասկէց՝ի զատ խոստացայ իրեն, որ առատաձեռնութեամբ վարձատրեմ զինքը, և ազատել ևս վտանգէ մը՝ եթէ իրօք պատահի։

ԱՆԴՈՎԿ

Ամբողջ տարակոյսներս և կասկածներս անհետացան. հիմա ամենայն վստահութեամբ կը հաւատամ, որ դու պիտի հասնիս ինչ բանի որ կը ցանկաս։ Ապա ուրեմն. թող երջանկանայ հայրդ քեզմով. և Ընդովկայ գերդաստանը շուտով արքունեաց զարդերէն մէկը ըլլայ։ (Կ'ԵՐԹԱՅ)

ՓԱՌԱՆՁԵՄ

Այո՛, թող ես ըլլամ պատճառ Ընդովկայ գերդաստանին ապառնի պարծանացը, և թող հռչակուի իմ անունս Տիեզերաց չորս կողմը։ (Կ'ԵՐԹԱՅ)

ՏԵՍԱՐԱՆ Գ

Ողիմպիադան հանգստարանը, Ողիմպիադա ամուսնի մը վրայ ինկած, ապաքինելու գոց, մազերը ամեն կողմեն վար արձակուած, գոյնը նեղած. Ֆելինէ անշարժ և պեռաբ անոր քովն, և գլուխը վրան ծռած։ Ֆերան վարած կանգնելով մը կը պեռանուի։

ՈՂԻՄՊԻԱԴԱ ԵՒ ՀԵՂԻՆԷ

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Ապաքինելու քանալով) Ֆելինէ...

ՀԵՂԻՆԷ

(Ապաքինելու արթնալով) Տի՛րուհիս...

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Կուլաս դու, ամենիւ սիրտ, կուլաս դու։

ՀԵՂԻՆԷ

Եւ ո՞վ կրնայ չկլաչ, ո՞ր քար և անզգայ սիրտ կրնայ դիմանալ, երբ իւր աչաց առջև քեզ նման վշտաց զոհ մը տես-

նէ, ամեն կերպով զոհուած, մերժուած և ատելի, և այս ամենէն ետքը՝ հեռու հայրենիքէդ. հեռու այն քաղցր ա-փունքներէն՝ որոնք աննկարագրելի բերկրութիւն կ'ընծայեն Յոյն սրտի մը։ Ա՛յո՛, հոն Յոյն մը իր անմխիթարութեամբ տակաւին մխիթարուած է... բայց դու ի՞նչ կ'ըլլաս... ո՞վ Երկինք, գոյնդ կը նետէ... կը կարմրի, կը ճերմկնայ... կը դողա՞ս դու, տի՛րուհիս, տի՛րուհիս, ո՜հ, ի՞նչ կ'ըլլաս։

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Հեղինէ, Հեղինէ, զիս Մահուան յանձնեցին... թունաւորուած եմ... կ'զգամ... կ'իմանամ... անոր դառն աղ-գեցութիւնը.. կի.. մանամ... ես...

ՀԵՂԻՆԷ

Գթած Երկինք,... ի՞նչ կը խօսիս,.. ի՞նչ թունաւորուիլ, և ե՞րբ... որմէ՞...

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Ոտէ ելլելով) Քահանայէն... անօրէն քահանայէն. նը-կատեցի ես զինքը... կը դողար, կը խորհէր, առջին կը նայէր, իմ հարցումներուս չէր լսէր, կը կենար քիչ մը, կը ներկայացընէր ինձ կենաց հացը... դարձեալ ետ կը քաշէր... ա՜հ, այո՛, այո՛, տարակոյս չ'ունիմ... Հեղինէ, Հե-ղինէ...

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչ ընեմ արդեօք... ես զիս կորսընցուցնելու վրայ եմ։..

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Կամ... կամ... (Հեղինէ յեռոնները իրար գարնելով և ոչ-պատուելով կ'երթայ) Ա՜հ, Երկինք, միթէ առանձին և ո՛չ-սի-րելիի մը բաղկացը մէջ պիտի մեռնիմ.. սիրաս... սիրաս... վայ ինձ... (Կ'երթայ ամենուն մը վրայ. և կը մտնէ ներս Թատանդեմ)

ՏԵՍԱՐԱՆ Գ

ՈՂԻՄՊԻԱԴԱ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

ՓԱՌԱՆՁԵՄ

Մեռած, լմնցած . . . չէ՛, չէ՛, կը քնանայ . . .

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Տեղէն ցատքելով) Ա՜յ դաւաճան . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

Լռէ՛, ձայնդ մի՛ հաներ. մինչև հանել անգամ չիկրնաս. գիտցի՛ր, որ ամենևին օգուտ չիպիտի ունենայ աղաղակդ. ինչու որ արդէն Ֆեղինէ բռնուած և բանտարկուած է. Ընշակ սատիկ գինովցած՝ գրեթէ անզգայ ինկած է. պալատին պաշտօնեայները իրենց սենեակները քաշուած են, և բոլոր պալատին մէջ միայն իմ բարեկամներս արթուն են. ապա ուրեմն շուտ ըրէ՛, և զինքդ յանձնէ՛ Մահուան։

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Ուրեմն բաց ականջներդ, Փառանձեմ, և լսէ՛ Մահուան մօտեցած Ողիմպիադայի խօսքերը, և զարհուրէ՛. անօրէն, ի՞նչ զօրաւոր պատճառ ունէիր այս ոճիրը գործելու . . .

(Ընդոմէջ ձեռս կը տանէ։)

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԱՌՔԻՆՆԵՐԸ ԵՒ ԱՆԴՈՎԿ

ԱՆԴՈՎԿ

(Ճապաղելով) Փառանձեմ, Փառանձեմ . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

Հո՛ս...

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Կ'էնդայ) Ի սէրն Աստուծոյ, կաթիլ մը ջուր...

ԱՆԴՈՎԿ

Հո՛ւտ, Փառանձեմ, հեռանանք ասկէց, և պատճառը կ'իմանաս... (Կ'էրթան էրիւոֆն ալ)

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Խիստ քաջալերյոյնով) Ի սէրն Երկնից, օգնութեան հասէ՛ք...

ԴՈՒՐՍԷՆ

Ողիմպիադայի ձայնն է, այո՛, այո՛. (Կը տրնէն Աբշալէ, պաշպօնական և պահապան)

ՑԵՍԱՐԱՆ ՎԵՐՋԻՆ

ՈՂԻՄՊԻԱԴԱ. ԱՐՇԱԿ. ԳԱՇՏՕՆԱԿԱԼՔ ԵՒ ՊԱՀԱՊԱՆՔ

ԱՐՇԱԿ

Ի՛նչ պիտի ըլլայ այս... Ո՛ղիմպիադա. ի՞նչ պատճառ ստիպած է զքեզ այսպիսի կերպով բոլոր արքունիքը վրդովելու. ելի՛ր ոտքի, և պատասխանէ՛ ինձ. ո՞ւր է Եղինէ...

ՈՂԻՄՊԻԱԴԱ

Ծունաւորուած եմ, սէ՛ր իմ. կաթիլ մը ջուր, և ապա խոցէ՛, որչափ որ կ'ուզես...

ԱՐՇԱԿ

Թունաւորուած . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱԼՔ

Թունաւորուած . . .

ԱՐՇԱԿ

(ՂՈՂԻՄՊԻԱՊԱ ԲԱՂԿԱՑԸ ՁԵՋ ԱՌՆԵԼՈՎ) Լսատէ՛, Ո՛ղիմպիադա . ո՞վ թունաւորեց զքեզ . . . (ՊԱՂՊՕՆԱԿԱԼՆԵՐԷՆ ՄԵԿԸ ՋՈՒԲ Կ'ՈՒՊԱՅ ՈՂԻՄՊԻԱՊԱՆ)

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(Ջուրը կը խմէ և ապէն կ'ելլէ) Հիմա լսեցէ՛ք ինձ, տէ՛ր իմ, և ճանչցի՛ք զիս . . . երկար ժամանակէ 'ի վեր՝ աղքուներաց մէջ ձեր խիստ սիրելին ինծի դէմ թշնամացած ըլլալով՝ կորսնցուցած էր իր երջանկութիւնը. ես նկատեցի զինքը. ես տեսայ իր խորհուրդը . . . այո՛, յստակ կը կարդայի անոր ճակտին վրայ իր դիտաւորութիւնը . . . տէ՛ր իմ, նստեցուցէ՛ք զիս . . . աղիքներս կը կորտին . . . չէ՛, ալ չե՛մ դիմանար . . . Մահը կը փնտռեմ ես. այն զիս կը փնտռէ . . . հոս, հոս, հոս եմ . . . եկաւ, եկաւ . . . ողջամբ մնա՛ք . . . զիս իմ հայրենիքս խրկեցէ՛ք . . . հոն, հոն թող թաղուի՛մ . . . ողջամբ մնա՛, Յունաստան . . . ողջամբ մնա՛ . . . (Կը դառնի, և ճաշասենեակը ամենեքեան դէպի գլուխնին կը ծռեն, ու վարագոյրը կը գոցուի)

ՎԵՐՋ*

* Հիմակուընէ կը յայտնեմ ընթերցողաց, որ ԱՐՇԱԿ Բ ողբերգութեան մէջ պիտի տեսնուի անօրէն քահանայի մը ըրած եղեռնագործութեանը համար ընդունած զարհուրելի պատիժը։